

ՔԱՐՈՋԽՕՍԱԿԱՆ

ԶԱՔԷՈՍ Ծ. ՎՐԴ. ՕՀԱՆԵԱՆ

ԽԱԽԱՐՄԱՆ ԳԻՇԵՐ

«Լոյսը աշխարհ եկաւ, սակայն մարդիկ խաւարն աւելի սիրեցին՝ քան լոյսը, որովհետեւ իրենց գործերը չար էին»:

(Յովհ. Գ:19-20)

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին Մեծ Պահոց շրջանով հոգեւոր եռուզեռ մը և հանգրուան մը կը ստեղծէ իւրաքանչիւրիս ներքին կեանքին մէջ: Ուստի արեւագալներով, հսկումներով, քարոզխօսութիւններով, ուխտագնացութիւններով, ծոմապահութիւններով, պահեցողութիւններով, և նման այլ հոգեւոր վարժութիւններով մեր Մայր Եկեղեցին մեր հոգեւոր կեանքերուն մէջ աշխուժութիւն, զօրութիւն և յատկապէս, Երկնաւոր Հօր հետ մեր հոգեւոր կապին մէջ զօրութիւն ստեղծելու կարելիութիւնը ընձեռեց այս անցած շաբաթներու ընթացքին: Եւ ահաւասիկ, Աւագ Շաբաթով սկսաւ նոր հանգրուան մը, որու աւարտին արդէն քիչ ժամանակ ետք մենք ազգովին պիտի դիմաւորենք, պիտի յիշենք, պիտի տօնենք մեր Տիրոջ և Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնը, որու շնորհիւ կանգնած ենք արդէն: Իսկ Խաւարման այս գիշեր, տարբեր գաղթօճախներէ և մայր հայրենիքէն, փութացինք, եկանք Սուրբ Երկիր Երուսաղէմ և ահաւասիկ այս խորհրդաւոր պահերուն ձեռք-ձեռքի, սիրտ-սրտի նոյն ոգիով, նոյն հաւատքով, նոյն սիրով և նոյն ակնկալիքով հաւաքուած ենք Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի սրբազան կամարներու ներքեւ: Խաւարման գիշեր է: Ս. Աւետարանը կ'ըսէ. «Լոյսը եկաւ, բայց մարդիկ խաւարը ընտրեցին, քանզի իրենց գործերը չար էին»: Ի՞նչ պատահեցաւ Խաւարման գիշերը: Տէր Յիսուս Վերջին ընթրիքէն անմիջապէս յետոյ մէկ-մէկ լուաց իր աշակերտներուն ոտքերը՝ ըսելով. «Ահաւասիկ օրինակ մը կը թողում ձեզի, ես՝ ձեր Տէրը և Վարդապետը կը լուամ ձեր ոտքերը, նոյնը ըրէք նաեւ դուք իրարու» (Յովհ. ԺԳ:14-15): Եւ ձեռով մը քրիստոնէական հաւատքի արտացոլացումի և վկայութեան ամենագեղեցիկ օրինակը տուաւ մեզի, ծառայելու, օգնելու, մխիթարելու, մաքրելու, ներելու և իրար սիրելու: Ան մեզի սորվեցուց մեր անձնական կեանքը զոհաբերել մեր մերձաւորին համար: Ապա Ան ուզեց իր աշակերտներուն հետ Գեթսեմանիի պարտէզին մէջ աղօթել, որովհետեւ գիտեր, որ մոլթը, խաւարը մօտ էր արդէն: Թէկուզ քանի մը վայրկեան, թէկուզ ժամ մը աղօթել իր աշակերտներուն հետ, բայց աւա՛ղ, իր ամենադժուար պահերուն, առաջինը ըլլալով իր առաքեալները, իր աշակերտները առանձին թողուցին զինք և չկարողացան մինչեւ իսկ քանի մը վայրկեան աղօթակից ըլլալ իրենց Տիրոջ և Փրկչին՝ Յիսուսին: Յետոյ անոնցմէ մէկը՝ Յուդան երեսուն արծաթի փոխարէն և համբոյրով մը իր Վարդապետին կը դաւաճանէր: Երբ Յիսուս կը ձերբակալուէր, այս անգամ առաքեալներուն ամենէն խիզախը՝ Պետրոս, երեք անգամ Տէր Յիսուսի աչքերուն մէջ նայելով կրցեր էր ըսել այսպէս. «Ձեմ ճանչնար այս մարդը, և չեմ գիտեր թէ ով է ինք»: Երկրորդ անգամ երբ այս նոյն խօսքը ըսաւ, Յիսուս դարձաւ և նայեցաւ Պետրոսի և Պետրոս դառնապէս լացաւ: Պետրոս լացաւ, որովհետեւ Քրիստոսի աչքերուն մէջ կարդաց, տեսաւ սա իրականութիւնը, որ մեր Տէրը կ'ըսէր, «Պետրոս, դուն երեք անգամ չէ, երեսուն անգամ ալ, երեք հարիւր անգամ ալ զիս ուրանաս ես պիտի շարունակեմ սիրել քեզ, ես պիտի շարունակեմ ներել քեզ, ես ընտրեցի քեզի»: Դառնապէս լացաւ և այդ արցունքներուն ընդմէջէն մեծ վերադարձ մը և ապաշխարութիւն մը ապրեցաւ:

Պատահական չէր, իր յարութենէն յետոյ, Տէր Յիսուս նոյն այդ Պետրոսին երեք անգամ պիտի հարցնէր «Պետրոս կը սիրե՞ս զիս»։ Այո, ճիշդ երեք անգամ։

Խաւարման այս գիշերը կու գայ մեզի ըսելու, որ նաեւ մեր մէջ խաւար աշխարհ մը կայ և թերեւս ուրիշներ ծանօթ չեն մեր այդ խաւար կողմին։ Այս խաւարման գիշերը կու գայ մեզի ըսելու, որ մենք անգամ երբեմն կը զլանանք քանի մը վայրկեան աղօթել, մենք անգամ շատ անգամներ կը նմանինք այն Յուդային, որ նիւթական որոշ ակնկալիքներով, փնտռտուքներով, ցանկութիւններով թերեւս կը դաւաճանենք մեր Տիրոջ։ Երբեմն Պետրոսի նման կեանքի մտահոգութիւններով կը մերժենք մեր քրիստոնէական հաւատքը, բայց այս գիշեր նաեւ կը յիշենք Քրիստոսի աղօթքը, ճիշդ այն պահուն երբ զինք կը խաչէին բացականչեց և ըսաւ. «Հայր, ներէ՛ անոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ինչ կ'ընեն»։

Այո սիրելիներ, մենք տարբեր աշխարհի անկիւններէն, այսօր եկանք և այս օրհնեալ սուրբ տաճարին մէջ ի մի հաւաքուեցանք։ Անշուշտ, մեր բոլորին կեանքերուն մէջ պատահեցան որոշ սխալներ, ունեցանք թերութիւններ, տկարութիւններ, յանցանքներ և այլն, բայց այս գիշեր թող մեր բոլորին համար, և մեր ազգին համար նոր սկիզբ մը ըլլայ։ Այն պարտամուրհակը որ մեր վրան է թող վերանայ մեր վրայէն՝ Քրիստոսի ողորմութեամբ և գթութեամբ։ Այսօր, մեր արցունքներէն թող բխի այդ ապաշխարութեան հառաչանքը և մենք վերանորոգուած մեր մկրտութեան ուխտերուն մէջ դուրս ելլենք այս սուրբ տաճարէն, վաղը շարունակելու Քրիստոսի խաչի ճանապարհը, բարձրանանք Գողգոթա, յետոյ տեսնինք այն թաղումը և ճրագալոյցին՝ Քրիստոսով վերստին սկսինք մեր քրիստոնէավայել կեանքի ընթացքին։ Տիրոջ օրհնութիւնը թող տարածուի մեր բոլորին վրայ և իր ողորմութիւնն ու գթութիւնը թող տարածուի մեր բոլորին վրայ, մեր աղօթքները լսելի ըլլան առաջի Աստուծոյ և յատկապէս աղօթենք այս գիշեր, որ մեր ազգին վրայէն Աստուածային և Երկնային օրհնութիւնները անպակաս ըլլան. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

